Յուլիսի վերջերին Զանգեզուր մտաւ Անդրանիկը և հրամանատարի պահանջը այդպիսով որոշ ժամանակի համար լուծուեց*):

Օգոստոսի սկզբներին, Կարսի ու Շարուր—Նախիջևանի հետ միաժամանակ, թուրքերն ընդհանուր յարձակման անցան և Զանգեզուրի վրա, բայց նորից հանդիպեցին յամառ դիմադրութեան: Զանգեզուրցիների խնդրանքով ինքնապաշտպանութեան գլուխն անցաւ Անդրանիկը, որ ընդհանուր գօրահաւաք յայտարարեց և յետ չպրտեց թրքական բոլոր գրոհները՝ գրաւելով և ամրանալով Զաբուղի բերանում:

Նոյեմբերին թուրքերը նորից դիմեցին գործողութիւնների Զանգեզուրի դէմ: Կռիւները տեւեցին մինչև դեկտեմբեր: Անդրանիկը, որ ստացել էր զարարաղցիների օգնութեան կոչը, ջարդեց թշնամուն և շարժուեց դէպի Շուշի, բայց, ինչպէս տեսանք արդէն, կէս ճանապարհին անգլիացիների կողմից կանգնեցուեց ու վերադարձուեց Զանգեզուր: Ճանապարհները բացուելուն պէս Անդրանիկը, անգլիական սպայ Գիբբնի ուղեկցութեամբ անցաւ Էջմիածին, ուր մի առ ժամանակ մնալուց յետոյ, դէնքերն ու ռազմամթերքը կաթուղիկոսին յանձնելով՝ անցաւ Թիֆլիս և այնտեղից, մայիս 6-ին, արտասահման**):

---

*) Բաթումի դաշնագրից յետոյ, Անդրանիկը՝ ունենալով իր հետ մօտ 3000 հետեւակ, 700 ձիաւոր, 150 թնդանօթաձիգներ, 80 գնդացիրաւորներ, 1 դաշտային և 3 լեռնային թնդանօթ, 40 ուղտ, 15 սայլ և մի քանի տասնեակ հազար գաղթականներ՝ Նոր-Բայազետի, Դարալագեազի ու Զուլֆայի վրայով անցել էր Խոյ՝ անգլիական բանակի հետ միանալու յուսով: Յունիս 21-ին, Սէյդավար գիւղի մօտ թիւրքերի հետ կռիւ բռնելով ու մօտ 150 հոգի սպանուած ու գերի տալով՝ նահանջել էր Զուլֆա, ապա Նախիջևան, ուր փորձել էր կազմակերպել հայկական ինքնապաշտպանութիւնը: Այստեղից էլ, սովից, հիւանդութիւններից ու թիւրքերից նեղուած՝ Օխչի չայի հովտով, անցել էր Ղափան:

**) Արժէ այստեղ արձանագրել մի փաստ, որ մինչև այժմ գրի չի առնուած և որը, սակայն, զուրկ չէ պատմական արժէքից: Ապրիլին Անդրանիկը մտաւ Երևանի դաւառը: Հայաստանի կառավարութիւնը նրան ընդառաջ ուղարկեց ներքին գործոց նախարարի օգնական Ս. Մանասեանին և Երևանի զօրամասի պետ Դրօին՝ բարի գալուստ մաղթելու և Երևան հրաւիրելու համար: Անդրանիկը ջղայնացած և լուտանքներ թափելով կառավարութեան գլխին՝ մերժեց մտնել «տաճիկների ձեռքով ստեղծուած Հայաստանի» մայրաքաղաքը և, ինչպէս գրուած է իր հրատարակած «Կովկասեան Ճակատի Պատմական Օրագրութեան» մէջ (էջ 137), «առանց Երևան մտնելու և դաւանանքներու երեսները տեսնելու», անցաւ Էջմիածին:

Ապր. 19ը Զատկի նախօրեակ էր, և Երևանի շուկան լիքն էր դիւղացիներով, քաղաքի բնակիչներով, զինուորներով: Մէկ էլ, կշեռքի տակ, ինչ որ վէճ ու կռիւ է սկսւում Անդրանիկի կամաւորների և Երևանցի զինուորների միջև: Անդրանիկի զինուորներից մէկը վիրաւորւում է, մէկ ուրիշը շտապում է Էջմիածին՝ հաղորդելու «փաշային», թէ՝ Երևանի կառավարութիւնը հրաման է տուել կոտորելու կամաւորներին, որոնցից մի քանիսն արդէն սպանուած են Երևանի շուկայում:

Անդրանիկը կրակ է կարում: Հրամայում է անմիջապէս հաւաքել բոլոր զինուորներին, դասաւորում է նրանց և հետեւակով, ձիաւորով, թնդանօթով ու գնդացիրով արշաւում Երևանի վրա: Կէսօրին Երևանի բլուրներին, այդիների յետևը, երևում են Անդրանիկի առաջապահները: Շուտով հասնում է և ինքը: Բլրի գլխին տնկում է դաշնակիցների դրօշակները, թնդանօթների բերանները ուղղում մայրաքաղաքի վրա, դիրքեր բռնում և պատգամաւորների միջոցով կառավարութիւնից բաւարարութիւն ու յանցաւորների պատիժ է պահանջում, հակառակ պարագային սպառնալով ռմբակոծել քաղաքը···

Կարելի է երևակայել, թէ ինչ դայրոյթ ու վրդովում առաջ եկաւ կառավարական ու